

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն
որոշման մեջ փոփոխություններ կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«-----» ----- 2017 թվական N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2388-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի **«Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին»** N 2388-Ն որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝
2. 137-րդ կետում «2011 թվականի մարտի 1-ից հետո» բառերը փոխարինել «2019 թվականի հուլիսի 1-ից» բառերով.
3. 138-րդ կետում «2011 թվականի մարտի 1-ը» բառերը փոխարինել «2017 թվականի հուլիսի 1-ից երկու տարվա ընթացքում» բառերով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՐԶԱՊԵՏ

ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ